

“Ազնեան Հոգիդ Սուրբ Աստուած ճլմարիտ. եւ աջողեան գգործս ձեռաց ծառայիս քո անիմաստ Պօղոսս զպրիս եւ հան աւարտ զսկսեալն իմ”:

1723. — Ս. Խաչի գրան վրայ, հարաւային կողմը, վերջին նորոգութեան ատեն զետեղուած հին խաչքար մը.

“Յիշատակ է Սուրբ Խաչս Կարննցի մատենսի Խաչատուրին մահտեսի Գէորգին. Մերկերիոսին եւ ծնողացն մահտեսի Մինասին. Փիրվազեն. Թվին ՌՃՀԲ.”:

1733. — Նոյն գրան վրայ, հիւսիսային կողմը, նոյնպէս համաչափօրէն զետեղուած: Շատ սղագրուած է խաչքարիս յիշատակարանը, կարեւոր մասն է.

“Յիշատակ է Տէր Սահակին. որ է արժանի բարեաց. Կանկէ որդւոց իւրոց . . . Եկեղեցւոյն Խաչելութեան. ՌՃՀԲ.”:

1733. — Ս. Կարապետի գրան վրայ, հարաւային կողմը, նոյնպէս համաչափօրէն զետեղուած.

“Յիշատակ է Սուրբ Խաչս Սիմեոնին որ է Չնաւարին (?) ՌՃՀԲ.”: Շատ անձոռնի գիր մ’ունի խաչքարս:

1733. — Նոյն գրան վրայ, հիւսիսային կողմը, նոյնպէս.

“Կանգնեցաւ Սուրբ Խաչս Բարեխօս առ Աստուած վասն Բենկացի Ուլուս (?) օղի Յոհաննին եւ կողակցւոյն եւ ծնողացն եւ որդւոցն եւ ամենայն զարմիցն. Թվին ՌՃՀԲ.”:

1731. — Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանայական դասուն կնիքը.

Սուրբ/Լուսաւորիչ/Եկեղեցւոյ/Քահանայից/ՌՄՁ.

1733. — Ս. Լուսաւորչի Աւագ գրան վրայ գրուած արյան-գր-նի-նը, որու մասին խօսեցանք վերեւ.

“Տաճար Աստուծոյ”:

“Ի սկզբան կառուցաւ սուրբ Տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի/մերոյ ի հայրապետութեան